

22.201 (1)

Պոլիտարճեր բոլոր յերկրների, միացե՛ք.

Ա. ԱՆԴՐԵՅԵՎ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՀԱՌԸ

.....

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ „ՄՈՒՐՃ-ՄԱՆԳԱՂ“

22.201

330.9(47)

4-58

15 JAN 2010

05 FEB 2001

Ա. ԱՆԴՐԵՅԵՎ

Handwritten marks and initials

А. АНДРЕЕВ

ՀՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

О задачах социалистической перестройки сельского хозяйства Сев.-Кавказского края

(Համագումարում արձայնաբանական հարց)

Речь на с'езде

Handwritten vertical notes: 4111 ԲՆԻՆԻՆԻ

— Ընկերներ, ճիշտ կլինի ասել, վոր մեր յերկրում համատարած կոլեկտիվացման հարցը անցքերի ամբողջ ընթացքով արդեն վերջնականապես լուծված է, Այդ հարցը լուծված է բանվոր դասակարգի և նրա կոմունիստական կուսակցության կողմից: Վերջնականապես լուծված է նա գյուղացիության չքավոր-միջակ հիմնական մասսայի կողմից ևս, և այժմ արդեն վոչ մի ույժ աշխարհումս, վոչ մի սպառնալիք, վոչ մի ծաղր ու բամբասանք մեր հակառակորդների և կոլեկտիվացման ամենամոտիկ թշնամիները—կուլակները կողմից—չեն կարող այժմ կանգնեցնել կամ ժամանակավոր արգելքներ առաջացնել գյուղատնտեսության կոլեկտիվացման այդ հաղթական շարժման առաջ: Կոլեկտիվացման հակառակորդների վոչ մի ճիգը, կուլակության վոչ մի սպառնալիքը այժմ չեն կարող արդեն հետաձգել կուլակային տնտեսության վոչնչացումը: Այժմ շարժումը գնաց այնքան ուղղակի, այնպիսի ույժով ծավալվեց ամբողջ յերկրում, և մանավանդ Հյուսիս-կովկասում, Մերձ-Վոլգյան շրջաններում և այլն, վոր այժմ այդ շարժումը իր ճամբին պիտի ջարդի բոլոր և ամեն տեսակի արգելքները:

Դեռ մի ամիս առաջ, Յերկրային Կուսկոմը և Յերկրային Գործկոմը դիմեցին Հյուսիսային Կովկասի աշխատավորության կոչով համատարած կոլեկտիվացման մասին: Մենք մեր դիմումի մեջ կոլեկտիվացման ժամկետը վորոշում էյինք մոտավորապես մեկ ու կես տարի: Սխալվել ենք այն տեսակետից, վոր, ըստ յերևույթին, մենք հիմնապես համարում էյինք Հյուսիսային Կովկասի կոլեկտիվացումը կավարտենք ավելի շուտ, քան յայնպիսիք այս տարվա վերջին, իսկ հարթավայր ռայոններում

ՀԵՆՐԻ ԿՈՄՍՈՒՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՅԿԱԿՆԵՐ
2014 - 0808
ՍՅԱՆԿՅԱՆ ԱՅԿԱԿՆԵՐ

(степные районы) նույնիսկ գարնանը, գուցե բացառութեամբ գյուղատնտեսութեան առանձին փոքրիկ կղզիներէ, այնպիսիներէ, վորտեղ ավելի դժվար կլինի անցկացնել համատարած կոլեկտիվացումը, որինակ, մի քանի ազգային շրջանները:

Ինչի՞ մասին ե վկայում սա:

Սա վկայում է միայն մի բանի մասին, վոր գյուղատնտեսութեան մեջ սոցիալիստական հեղափոխութեան զարգացումը այնքան արագ է, վոր նա գերանցում է, տապալիւով մեր ամենահամարձակ պլանային յենթադրութիւնները կոլեկտիվացման առթիվ:

Սակայն ավելի լավ, յեթե մենք սխալվինք այդ տեսակետից, ավելի լավ, յեթե գյուղատնտեսութեան սոցիալիստական հեղափոխութիւնը այդքան արագ է առաջ քայլում և անցում է մեր ամենահամարձակ դրոլթներէից և ամենահամարձակ պլանային յենթադրութիւններէից:

ՎՈՐՆ Ե ԱՅՅՄ ԳԼԻԱՎՈՐԸ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԵՋ

Այժմ, յերբ մենք մեր քաղաքական լոզունգը, վորը տվեց կոմունիստական կուսակցութիւնը կոլեկտիվացման մասին, նրանից հետո, յերբ մենք նրան (լոզունգը—թարգմ.) մասսաների միջոցով ստուգեցինք, այդ լոզունգի շուրջը համախմբեցինք քաղաքի յիվ գլուղի աշխատավոր մասսաները,— այժմ կոլեկտիվացման գլխավոր հարցերն են դառնում կոլխոզ շինարարության պրակտիկայի հարցերը:

Դրա ցայտուն ապացույց է թեկուզ հենց այս համագումարը, վորին հավաքված են բանվորներն ու գյուղացիներն հազար հինգ հարյուր ներկայացուցիչներ: Յիս նախ քան հանդես գալս, պահանջեցի, վոր ինձ բերեն համագումարի պատգամավորների ընտր հարցերը, իսկ նրանց թիվը 300—400-ի յեր հասնում, վորոնք տրվել են Ը.Ն. Պիվովարովի և Տյուրնիկովի զեկուցումների առթիվ, պահանջեցի պատգամավորների ճառերի մի շարք սղագիր արձանագրութիւնները և յես վոչ մի գրութիւն, վոչ մի յելույթ չգտա, վորտեղ հարց տրվեր թե՛—«հարկավոր է արդյոք համատարած կոլեկտիվացումը, ճիշտ է արդյոք, վոր մենք այժմ համատարած կոլեկտիվացման հարցն են դնում և այլն»: Վոչ մի այդպիսի հարց նախագահութեան տրված գրութիւններին մեջ յես չգտա: Բոլոր հարցերն ու յելույթները բացառապես վերաբերվում են այն հարցերին—«տապ ինչպե՞ս կառուցել կոլխոզը, իսկ ինչ է հարկա

վոր նրան լավ կազմակերպելու համար», հապա ինչպե՞ս անել, վոր այդ գործը ավելի արագ կերպով կազմակերպել և ստանալ ավելի շատ լավ կազմակերպիչներ, ինչպես անել, վոր ավելի շատ ունենալ այս կամ այն կանոնադրութիւնը և այլն»:

Սկզբունքային հարցերն այն մասին թե հարկավոր է արդյոք մեզ համատարած կոլեկտիվացումը և կարելի՞ յե արդյոք նրան իրագործել,— այդ հարցերը այժմ կյանքը լուծել և հանել է որակաբարձից:

Այժմ արդեն կոլխոզչինարարութեան գլխավոր հարցերն են. ինչպես կատարել անհատական տնտեսութիւնից հասարակական տնտեսութեան անցնելու պրոցեսը ամենակարճ ժամանակամիջոցում, ըստ վորում կատարել այդ առանց գյուղատնտեսութեան համար առանձին կորուստներ:

Այժմ գլխավոր հարցերը «վերաբերում են նրան, թե՛ ինչպես այդ պրոցեսը ամենակազմակերպված ձևով կատարել, վոր կոլեկտիվացումն այնպես անցկացնել, վոր արդեն հենց այս տարի հսկայական պլյուսներ ստանանք գյուղատնտեսութեան բարձրացման տեսակետից, այսինքն վոչ միայն ստեղծել կոլխոզը, վոչ միայն համատարած կոլեկտիվացումն անցկացնել, այլ անցկացնել այդ անմիջապես ընդլայնված արտադրական բազայի վրա այնպես, վոր հենց այս տարի պլյուսներ ունենալ, հաջողութիւններ և նվաճումներ ունենալ ցանքսի տարածութեան լայնացման, անասնաբուծութեան բարձրացման, տնտեսութեան ուրիշ ճյուղերի զարգացման տեսակետից և այլն»:

Գլխավոր հարցերն այժմ կայանում են նրանում, թե ի՞նչպես կազմակերպել կոլխոզչինարարութեան համար միջոցներ, ինչպե՞ս կազմակերպել աշխատանքը կոլխոզում, ինչպես կազմակերպել ճիշտ հաշվառը, ճիշտ հաշիվները և ճիշտ հաշվապահութիւնը, ինչպե՞ս ապահովել մեր կոլխոզային տնտեսութիւնները գրագետ ղեկավարներով և ինչպե՞ս կազմակերպել, ինչպես ծավալել կոլխոզներում տնտեսութեան ավելի ճիշտ սիստեմ, քան այդ կատարվում էր անհատական տնտեսութեան սահմաններում:

Ահա թե ինչի վրա այժմ շուտափութ կերպով պիտի կենտրոնացնենք մեր ուշադրութիւնը, մեր ամբողջ ուժերը և կուսակցութիւնը, և՛ խորհրդները, և՛ կոոպերացիան, և մեր ստորին կազմակերպութիւնները այդ հարցերի շուրջը գյուղում սոցիալիստական մրցում պիտի ծավալեն, վորովհետև այդ հարցերը պիտի վորոշեն թե՛ վորքան արագ

և ճիշտ կանցնենք մենք համատարած կոլեկտիվացման և վորքան արագ կապացուցենք ամեն մի չքավորին և մանտվանդ միջակին համայնական տնտեսութայն բոլոր առավելութունները:

Այսպիսի մի շարք հարցերից յես ուզում եմ կանգ առնել միայն յերեքի վրա: Առաջին հարցը. ի՞նչպես պահպանել կոլխոզի համար այն նյութական աղբյուրները և կարողութիւնը, վորն ունի անհատական տնտեսութիւնը կոլխոզ մտնելուց առաջ: Յերկրորդ հարցն է—այն մի քանի հակասութիւնները մասին, վորոնք կոլխոզչինարարութայն այս ետապում անխուսափելի յեն և վորոնք մենք պատրաստ ենք հաշվի առնել, և յերկրորդ հարցն է—թե ինչո՞ւ այս համագումարը, վոր նըստած է այժմ այս դահլիճում, գումարված է վորպես կոլեկտիվացման նվիրված բանվորա-գյուղացիական համագումար, և այդ առթիվ յես ուզում եմ յի մի քանի խոսք ասել բանվոր դասակարգի գյուղատնտեսութայն կոլեկտիվացման հետ կապված հատուկ խնդիրները մասին:

ԱՆՇԵՏԱԶԳԵԼԻ ՅԵՎ ՎՃՌԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ԱՆԱՍՈՒՆԻ ԻՅԵՎ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՎՈՉՆՁԱՑՄԱՆ ԴԵՄ

Ինչու համար մենք ամենայն համառութայն պետք է շնենք անհատական տնտեսութայն միջոցների, լծկան անասունի, ինվենտարի, սերմնացույթի, կերի և այլն պահպանման հարցը կազմակերպվող կոլխոզների համար: Այն պատճառով, վոր մեր Հյուսիսային Կովկասում և այլ ուայոններում յեղած մի քանի փաստերը ցույց են տալիս, վոր անասունների, և մասամբ սերմացույթի, կոլխոզ մտնելուց առաջ ծախսելու յերևույթը ուղղակի սպառնալի չտփեր է ընդունում:

Մենք կարող ենք այնպիսի դրութայն առաջ կանգնել, յեթե ժամանակին կտրուկ միջոցների չդիմենք—յերբ գյուղատնտեսութիւնը և մեր կոլխոզները կզրկվեն տնտեսութայն զարգացման համար իրենց սեփական միջոցների վորոշ մասից: Այդ միջոցները վորոշ չափով ծախսված կլինեն: Մինչդեռ բոլորի համար պարզ պետք է լինի, վոր կոլխոզների համար նյութական բաղալի հիմնական աղբյուրը պետք է լինի գյուղատնտեսութայն իր սեփական ներքին նյութական ունակութիւնները, կոլխոզի մեջ միացող գյուղացիական տնտեսութայն ներքին միջոցները: Նրանք պետք է լինեն կոլխոզների զարգացման հիմքը:

Ի՞նչ է նշանակում ծախսել—վոչնչացնել անասունը: Խոշոր ա-

նասունը վոչնչացնելը—դա նշանակում է հետագայում 4—7 տարի վերականգնել նրան: Տնտեսութայն անասնապահական ճյուղի բարձրացումը ավելի դժվար է, քան դաշտարուծական տնտեսութայն բարձրացումը: Ահա թե ինչու մենք առանձին համառութայն հարց ենք դնում անասունների ծախսելու վճռականորեն դադարեցնելու մասին:

Մենք այդ հարցը դնում ենք այն պատճառով, վոր մեր առաջ կանգնած է ձիերի, լծկան ույժի կրճատման վտանգը: Իսկ ինչ է նշանակում կենդանի լծկան ույժի կրճատման վտանգը: Իսկ ի՞նչ է նշանակում կենդանի լծկան ույժի, և մանավանդ ձիու, կրճատումը: Իս նշանակում է ցանքսի տարածութայն ուղղակի կրճատումը: Մեր կուսակցական, խորհրդային աշխատողների մեջ կան այնպիսի «դոչագներ», վորոնք հենց այժմ գյուղատնտեսութայն ինդուստրացման, անմիջապես ձիուց, յեղից տրակտորի վրա նստելու ուղղակի և համարձակ կուրս են վերցնում (ընթացք են բռնում):

Բայց նախ քան նրա (տրակտորի թարգմ.) վրա նստելը, դրանք պետք է բավարար քանակութայն ունենալ: Իսկ այս տարի տրակտորը Հյուսիսային Կովկասի գյուղատնտեսութայն մեքենայական լըծկանով սպասարկելու մեջ ¹/₆ մասն է բունելու: 2—3 տարի ևս կանցնի մինչև վոր մենք կկարողանանք մեր գյուղատնտեսութիւնը ապահովել մեքենայական լծկան ույժով, սակայն նրանից հետո ևս ձին պետք կը լինի: Մենք գիտենք, որինակ այնպիսի մի յերկիր, ինչպես Ամերիկան է, վորն իր գյուղատնտեսութան մեջ ունի մոտ 1 միլիոն հատ տրակտոր, սակայն միևնույն ժամանակ ամերիկյան տնտեսութիւնն ունի հսկայական քանակութայն ձիեր: Այդ պատճառով անհրաժեշտ է ավելի խնամք տանել ձիու պահպանման և զարգացման համար:

Ի՞նչպես անել, ինչպես պայքարել վոչնչացման, ծախսելու տարրերը հետ, ինչպես վերացնել այդ յերևույթները, վորովհետև վաղը, հենց գյուղացիական տնտեսութիւնները կոլեկտիվ տնտեսութիւնների մեջ միանալուց հետո, ինքը գյուղացին պիտի զգա ծախսելու արդյունքները: Մենք տարրերը հետ պայքարել ենք միշտ վճռականորեն և վճռական հասարակական պայքարով մենք պիտի կանգնեցնենք և այս տարրերը, ինչ էլ վոր լինի: Հասարակայնութայն այդ պայքարը գյուղերում արդեն սկսված է և այդ ուղղութայն անհրաժեշտ է աջակցել այնպիսի հասարակական միջոցառումներին, ինչպիսին են կարճ ժամանակամիջոցում և անմիջապես բոլոր տնտեսութիւնների ունեցած

ին՝վենտարի, անասունի, սերմնացույի և այլն հաշվառքը, վորպեսզի գրանից հետո առանց խորհրդի գիտութեան գրանք չծախսիվեն, չվոչնչացվեն: Այդ միջոցառումը, վոր առաջադրել են իրենք, չբավոր միջակ մասսաները, պետք է անմիջապես աջակցել, վորպեսզի գյուղխորհուրդը այդ գործում վորոշ, վճռական դեր խաղա. իհարկե խոսքը զանազան մանրունքների մասին չի (հավ, թուշուն և այլն):

Իհարկե, խոսքը այն մասին չի, վոր արգելվի առանձին տնտեսութեան իր միջոցների հետ վարվել այնպես, ինչպես ինքը նպատակահարմար է գտնում. խոսքը իսկական գիշատիչ վոչնչացման մասին է:

Յերկրորդ միջոցառումը, դա այն է, վոր կոլեկտիվացման ժամանակ վորքան կարելի յի արագ համայնացնել անասունները և խոշոր ին՝վենտարը: Վորովհետև այժմ ամեն մեկին պարզ է, վոր համատարած կոլեկտիվացման ռայոններում բարձրացնել անասնապահութունը անհատական տնտեսութեան շրջանակներում անհնարին է: Նրան կարելի յի բարձրացնել միայն կոլտոզներում, միայն համայնացման հիման վրա: Այդ պատճառով անհրաժեշտ է անասունների վորքան կարելի յի շատ համայնացումը, այդ անասունների համար կերել շուտափույթ համայնացումը:

Բայց ինչպե՞ս համայնացնել, ինչպե՞ս շահագրգռել միջակ գյուղացուն, վոր նա վորքան կարելի յի շուտ համայնացներ իր անասունը: Ինձ թվում է, վոր այդ տեսակետից շատ ճիշտ են կուսակցութեան Յերկրային կոմիտեյի և Յերկրգործկոմի վորոշումները ուղղված միջակ տնտեսութուններին շահագրգռելու իրենց անասունների ամենաարագ համայնացման մեջ այնպիսի միջոցով, վոր բացի փայավճարից կոլտոզում լայն կերպով գործադրվի նաև բնամթերքով մուծումներ կատարելու սխտեմը, վորը կոլտոզը պարտավոր պիտի լինի ըստ իր դրութեան ամբողջական վճարել այդ մուծման արժեքը և վորոշ տոկոսները:

Յե՛վ չորրորդ միջոցառումն է—հասարակական ներգործումը առանձին տնտեսութունների վրա: Մենք պարտավոր ենք գյուղում այնպիսի գրութուն ստեղծել, վոր իրենց անասունը, սերմնացուն ծախող տնտեսութունը, առանձին անհատական տնտեսութունները հասարակական բոլորի յենթարկվեն, կողպերատիվային բոյկոտի, վորպեսզի գյուղում այնպիսի հասարակական պայմաններ ստեղծվեն, վոր կոլտոզ մտնելուց առաջ իր անասունը վոչնչացնող ամեն մի գյուղացին

համարվի գիշատիչ, կոլտոզային ճակատի դասալիք: Ուրիշ կերպ չի կարող լինել: Այդպիսի տնտեսութունները պետք է ուղղակի հավասարեցնել կուսակային տնտեսութուններին նրանց կոլտոզ ընդունելու տեսակետից: Յեթե դու քո անասունը, սերմնացուն և այլն ծախում ես, ապա դու չես կարող կոլտոզ ընդունվել: Կոլտոզին հարկավոր չի այնպիսի տնտեսութուն, վորը ծախսելով իր անասունը, մեքենաները և այլն կոլտոզ է մտնում միայն մի մտրակով: Այդպիսի տնտեսութունը կուսակների հետ միասին թող մնա կոլտոզից դուրս, իսկ կոլտոզներում նրանք հարկավոր չեն (ծափահարութուններ):

Հայտնի յի, վոր պետութունը կոլեկտիվացման համար հատկացված միջոցները կրկնապատկել է. կոլտոզների վարկավորման գումարը կազմում է արդեն կես միլիարդ ուրբլի: Սակայն մեղ համար պարզ պետք է լինի, վոր այդ միջոցները կոլտոզների համար բոլորովին բավական չեն, վոր կոլտոզների հիմնական միջոցները պետք է լինեն կոլտոզ մտնող անհատական տնտեսութուններից հավաքված իրենց սեփական միջոցները: Այն կոլտոզը, վորը վոչինչ չի հավաքել, նա վոչինչ չի ստանա. բարի յեղիք առաջ մորթիլիցացիայի յենթարկել քո միջոցները: Միայն այսպես կարող է զրված լինել մեր պետութեան կողմից ոժտանդակութեան հարցը կոլտոզների վերաբերմամբ—տնտեսարական հաշիվ 100 տոկոսով: Այլ կերպ չի կարելի. և ըստ յերևույթին, պարզ է, վոր ամեն մի գյուղացի դա շատ լավ կհասկանա, հավսնութուն: Կտա և լիովին կմիտնա նման հարցադրման:

Ահա ինչպիսի միջոցառումներին, վորոնք անց են կացվում գյուղերում, մենք պետք է անպատճառ և անմիջապես աջակցենք, վորպեսզի ին՝վենտարի վոչնչացման խայտառակ յերևույթին վերջ դնենք: Յես համարում եմ, վոր այս համագումարի վորոշումը այդ տեսակետից հսկայական նշանակութուն կունենա:

ԿՈՒԼԱԿԻ ՄԱՍԻՆ

Յերկրորդ հարցն այն մասին է, վոր կոլտոզի նարարութեան վորոշ շրջանում մենք պիտի ունենանք մի քանի հակասութուններ: Ի՞նչ հակասութուններ են դրանք: Որինակի համար կմատնանք միայն յերեքի վրա: Մենք ասում ենք, վոր Հ. Կովկ. մենք կիրառում ենք հավասարած կոլեկտիվացումը, բայց այնուամենայնիվ այդ հավասարած կոլեկտիվացման մեջ մենք վորոշ ուղղումներ մտցնում ենք: Նա լիովին

համատարած չի դուրս գալիս, վորովհետև կուլակներին մենք կոլխոզ չենք ընդունում, իսկ նրանք յերկրամասի տնտեսությունները 5—6 տոկոսն են կազմում:

Նշանակում է լիովին համատարած չե կոլեկտիվացումը: Համատարած կոլեկտիվացումն է միայն այն գյուղացիական տնտեսությունների, վորոնք չքավոր-միջակ տնտեսությունները շարքին են պատկանում: Ինչո՞ւ համար մենք կուլակին չենք ընդունում: Վորովհետև մենք ուզում ենք ավելի շուտ և ավելի կազմակերպված անցնել կոլեկտիվացման, իսկ կուլակը իր ամբողջ ընուկթյամբ կոլեկտիվացման թշնամի չե, նա չի կարող կոլեկտիվացման կողմնակից լինել, իսկ յեթե մենք նրան ընդունենք կոլխոզ, նա այնտեղ կարող է միայն կազմալուծիչ և ֆլասատու լինել, թեպետ կուլակը գիտելով կոլեկտիվիստ ձևանալ: Յեթե այժմ Հյուսիսային Կովկասի կուլակների մեջ հարցաքննություն անցկացվի, թե ով կողմնակից է կոլխոզ մտնելուն, թերևս մեծամասնությունը կոլխոզ մտնելու կողմնակից կլինի: Անպայման այդպես կլինի, սակայն չի նշանակում, վոր կուլակը կոլեկտիվացման կողմնակից է: Ուրիշ ճար չկա, նա կոլխոզ է մտնում նրա համար, վոր ներսից ֆլաստի կոլխոզին: Յե՛ւ այդ պատճառով չպետք է խաբվել, յերբ կուլակն ասում է, վոր նա կոլխոզներին կողմնակից է:

Պետք է միշտ պարզ իմանալ, վոր կուլակը իր եյությամբ չի կարող կոլեկտիվացման կողմնակից լինել: Կուլակը հին հասարակարգի կողմնակիցն է—չքավորի և բատրակի շահագործման և ստրկացման (кабала) հասարակարգի, ուրիշը լինել նա իր եյությամբ չի կարող: Իսկ յեթե այդ այդպես է, ինչո՞ւ մենք կոլխոզը ընդարձակության գործը բարդացնենք: Ահա թե ինչու մենք ասում ենք, վոր կոլեկտիվացումը համատարած է, սակայն համատարած չե կուլակային տնտեսությունների վերաբերմամբ: Մեզ անհրաժեշտ է, վորքան կարելի յե կազմակերպված, վորքան կարելի յե շուտով անցնել անհատական տնտեսությունից համայնականին: Իսկ մենք այդ կանենք այնքան ավելի շուտ, այնքան ավելի անցնցում կերպով, յերբ կուլակին կոլխոզ չթողնենք և յերբ արդեն կոլխոզ սողոսկած կուլակին այնտեղից հեռացնենք:

Կուլակին մենք կոլխոզի սահմաններից դուրս հանցիքնք, սակայն դա չի նշանակում, վոր կուլակին լրիվ ազատություն է տրվում—կուղեմ կցանեմ, կուղեմ վոչ: Վոչ, նա անպատճառ պիտի հսկողության յենթարկվի: Կուլակը պարտական է իրագործել վորոշ ազդումներն ունեւմը և իրագործել տրված ցանքսի ծրագիրը:

Կուլակը պարտավորված պիտքե լինի իր մթերքները անպատճառ կոպեքերացիին հանձնելու: Ուրիշ կերպ չի կարող լինել: Կոլխոզի կողմից իրան խստիվ դիսցիպլինայի յենթարկել: Կուլակային տնտեսությունը մենք պետք է կոլխոզային ողակի մեջ առնենք այնպես, վոր կուլակներին, վորպես դասակարգ, վերջնականապես զինաթափ անենք, վերջնականապես քաշենք, հանենք կուլակային տնտեսության բոլոր արմատները, ամրապնդենք մեր կոլխոզները և հետո միայն հարց դնենք ու տեսնենք թե ինչ պայմաններով այդ նախկին կուլակային տնտեսություններին մենք ընդունում ենք կոլխոզների մեջ: Ահա միակ ճիշտ ուղին, վոր մեր կուլակցությունը բոլորովին պարզ կերպով վորոշել է: Պարզ է, վոր կուլակը պիտի փորձի ֆլաստել կոլխոզին նրա սահմաններից ևս դուրս գանվելով:

Սակայն այստեղ ևս մենք նրան ամենասկզբից ի վեր պիտի ասենք.—Մենք համայնական տնտեսությունը դրսից պայթեցնել չենք տա: Իսկ այն կուլակների վերաբերմամբ, վորոնք պիտի շարունակեն իրենց աշխատանքը կոլեկտիվացման դեմ, պիտի շարունակեն գանաղան ձևերով ֆլաստել, այդպիսի կուլակների վերաբերմամբ ամենախիստ միջոցներ պետք է ձեռք առնվեն, նույնիսկ քշելով այդպիսի կուլակային տարրերին Յերկրամասի սահմաններից շատ հեռու:

ՄԻ ՔԱՆԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յերկրորդ հակասությունը կայանում է նրանում, վոր մենք ասում ենք—համատարած կոլեկտիվացում, սակայն ըստ յերևութին, վորոշ ժամանակ, կոլխոզի շրջաններում, մենք կունենանք անհատական տնտեսության մնացորդներ, ինչպես որինակ, տունը, բանջարանոցը, մանր անասունը, թռչունները և տնտեսության ուրիշ զանազան տեսակի ճյուղերը: Վորոշ շրջանում այդ յերկու ձևի—համայնացրած և անհատական տնտեսությունների, միաժամանակ գոյությունը, ըստ յերևույթին, անխուսափելի յե, վորովհետև այս շրջանում դեռ ամեն տեղ չի կարելի միանգամից անհատական տնտեսությունից կոլխոզի ավելի կատարելագործված ձևին—կոմունային անցնելու:

Այժմ նոր կազմակերպված կոլխոզների վերաբերմամբ մեր առաջ մի խնդիր է դրված—համայնացնել կոլխոզներում հողի մշակումը, արտադրության միջոցները, արտադրության գործիքները և անասունները: Ահա սա յե առաջին աստիճանը:

Ճիշտ կլինի արդո՞ք այժմ շտապել տունը, հավը և այլն համայնացնելու: Վոչ, ճիշտ չի լինի, վորովհետև ներկա շրջանում կոլխոզները չեն կարողանա այդ բոլորը տանել, դեկավարել: Նախ մենք կանցկացնենք գյուղատնտեսութեան գլխավոր ճյուղերի համայնացումը, իսկ հետո, ամբարշտիկով այդ աստիճանի վրա, ավելի առաջ կդիմենք:

Յերբորդ հակասութունն է—դա այն հարցն է, վորը շրջափոխում է գրավոր հարցերում: Մենք անցել ենք գյուղատնտեսութեան, այսինքն գյուղի սոցիալիստական վերաշինութեան, և միևնույն ժամանակ վորոշ շրջանում մեզ մոտ խորհրդների, սովխոզների, դպրոցի կողքին գոյութիւն պիտի ունենան նույնպես և յեկեղեցիները, մզկիթները: Սա հակասութունն է կարծես թէ: Ինչպես կարելի յե—սոցիալիզմի կառուցումն և հենց այստեղ կողքին յեկեղեցին: Սակայն ընկերներ, յես կարծում եմ, վոր և լայն տեսակիտից բոլորովին ճիշտ ենք անում, յեթե քաշում ենք յերբեմն տեղական խորհրդային և կուսակցական կազմակերպութիւնները, վորպեսզի նրանք չշտապեցնեն յեկեղեցիների փակման գործը և չկապեն կոլխոզի կազմակերպման հարցը անմիջապես յեկեղեցու փակման հետ: Իսկ այդպիսի փաստեր մենք այժմ ունենք: Մենք պարտավոր ենք հաստատորեն ասել, վոր այդպիսի փորձերից պետք է զգուշ լինել: Մի բարդացնեք գլխավորը, իսկ այդ գլխավորը կայանում է կոլխոզներ կազմակերպելու մեջ: Իսկ յեթե կոլխոզի ներսում ևս կան վորոշ խմբեր, վորոնք շարունակում են աստծուն հավատալ, շարունակում են աղոթել, գնալ յեկեղեցի և այլն, ինչու՞ համար պետք է փակել յեկեղեցիները: Ի՞նչ է նշանակում փակել յեկեղեցիները, յերբ դեռ կան հավատացյալներ:

Այդ նշանակում է հավատացյալներին քչել դեպի աղանդները: Մենք ունենք այնպիսի դեպքեր, յերբ յեկեղեցու փակման հետ միասին առաջ են գալիս աղանդավորների կազմակերպութիւններ, վորոնք ավելի փնտասակար են, վորովհետև նրանց հետ պայքարն ավելի դժվար է: Ահա թե ինչու այդ տեսակետից մենք ավելի զգուշ պետք է լինենք: Մենք գիտենք, վոր հաճախ մեր թշնամին—կուլակը հանդես է գալիս վորպես յեկեղեցու փակման կողմնակից, վորը մեկ կողմից աջակցում է յեկեղեցիներին փակման, իսկ հետագայում ոգտագործում է այդ կոլխոզների դեմ պայքարելու համար:

Դրա մասին պետք չէ մոռանալ: Պետք չէ ուժեղացնել թշնամուն: Հակակրօնական աշխատանքը տար, տար համառորեն, բացատրիք կրօնական դուռմանի ամբողջ վնասակարութիւնը, բայց մի մոռանար

այն գլխավորը, վորն անհրաժեշտ է գյուղում կրօնի վերջնական վերացման համար: Այդ գլխավորը կայանում է նրանում, վոր ստեղծենք ամուր և լավ համայնական տնտեսութիւններ, կոլխոզներ, վոր արմատորեն վերափոխենք կոլխոզում կյանքն ու ամբողջ կենցաղը, գյուղացիների ամբողջ կենսական պայմանները, և այն ժամանակ նրանք վերջնականապես կզաղարեն հավատացյալ լինելուց, վորովհետև նրանք իրենց դրութեան տերը կլինեն: Ահա այդ էլ դուրս կանի նրանց միջից կրօնական դուռմանը: Մենք գիտենք, վոր կրօնը վոչնչացնելու համար անհրաժեշտ է մի ամբողջ կուլտուրական հեղափոխութիւն կատարել, անհրաժեշտ է ապահովել բնակչութեան համայն գրագիտութիւնը: Հենց վոր մենք այդ ապահովենք, հենց վոր դաշտերը կգան խոշոր մեքենան, տրակտորները, ամբողջ դուռմանը, բոլոր նախապաշարումները, նույն թիւում և կրօնը, կհերկվեն խորը հողի մեջ անպետք արտաների նման:

ԴԵՊԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԶԵՎԸ

Յե՛վ վերջապես յերբորդ հարցը: Ինչու կոյեկտիվացման նվիրված այս համագումարը հրավիրված է վորպես բանվորա-գյուղացիական համագումար, վորպես յերկու դասակարգի—բանվորների և գյուղացիների միացյալ համագումար: Դրա հիմքում զբված է բատրակի, չքավորի, միջակի և բանվորի ուշժերը միացնել, վորպեսզի գյուղատնտեսական յերկրամասի կոյեկտիվացումը միացյալ միահամուռ ջանքերով վարքան կարելի յե արագ և կազմակերպված կերպով անցկացնել: Ահա թե ինչ է զբված յեղել միացյալ համագումար հրավիրելու հիմքում: Գյուղացիների այս միութիւնը բանվոր դասակարգի ուշժերի հետ անհրաժեշտ է այն պատճառով, վոր գյուղատնտեսութեան կոյեկտիվացումը, նրա արմատական վերակազմութիւնը չի կարող իրագործվել միայն գյուղի ուժերով, վորովհետև գյուղացին խոշոր տնտեսութիւն կազմակերպելու համար անհրաժեշտ փորձառութիւնը չունի, վորովհետև նա մինչև այժմ գտնվել է ներփախ անհատական տնտեսութեան շրջանակներում, մինչդեռ բանվորները արդեն խոշոր սոցիալիստական արտադրութեան փորձառութիւն ունեն և կարևոր է, վոր բանվորները իրենց աղ փորձառութիւնը գյուղ տեղափոխեն գյուղատնտեսութեան

կազմակերպման համար: Բանվորներն արդեն ընտրում են իրենց շարքերից կազմակերպիչներին կողմեր գյուղի համար:

Ուղղակի պետք է ասել, վոր գյուղացիներստուրյան սոցիալիստական վերակառուցումը հնարավոր է միայն այն դեպքում, յեթե մենք վոչ խոսքով, այլ գործով իրագործենք իսկական սոցիալիստական արեւմտեցումը քաղաքից գյուղ, արեւմտեցումը վոչ թե ռազմական իմաստով մի վումին գրավելու համար, այլ քաղաքի, Ֆաբրիկայի, բանվորների կողմից վերաբնակող գյուղին ամենալայն ոժանդակութեան արեւմտեցում:

Այդպիսով, ուրիմն, բանվոր դասակարգի հատուկ և կարևորագույն խնդիրն է՝ կազմակերպչական ոգնութունն ցույց տալ գյուղացուն խոշոր համայնական տնտեսութուն ստեղծելու գործում: Մյուս կողմից կոլեկտիվացման ալիքի լայն ծավալման առթիվ բանվոր դասակարգի խնդիրները կայանում են նրանում, վոր մեր արդյունաբերութունն այժմ ավելի յեռանդուն կերպով աշխատի: Յեթե առաջ մենք ասում եյինք, վոր արդյունաբերութունը կախած է գյուղատնտեսութունից, վոր արդյունաբերութունն այս ինչ ճյուղերի զարգացումը ուղղակի հենվում է գյուղատնտեսութուն վրա, ապա այժմ այդ դրութուն մեջ պետք է վորոշ ուղղում մտցնել այն մտքով, վոր այժմ, յերբ գյուղում խոշոր համայնական տնտեսութուն կազմելու բոլոր պայմանները ստեղծված են, յեթե ինքը գյուղացին լայն հոսանքով մտալ կոլխոզ, այժմ արդյունաբերութեան վրա բնկնում է խոտորագույն պատասխանատւութուն՝ վորքան հնարավոր է շուտով ոգնութեան գալ կոլեկտիվացմանը: Այժմ գործը մնացել է տեխնիկական բազային, խոշոր մեքենային, վորպեսզի գյուղատնտեսութեան մեջ իսկական հեղաշրջում կատարվի: Յեվ այդ պատճառով մեր արդյունաբերութեան պատասխանատուութունը լայն ծավալ ընդունած համատարած կոլեկտիվացման նշանաբանի տակ տասնյակ անգամներ աճում է, և այդ պատճառով բանվորը պարտական է շտապեցնել արդյունաբերութունը՝ գյուղատնտեսութեան ավելի շուտ մեքենաներ տալու, գյուղատնտեսութեան մեջ քիմիական պարարտանյութերը ավելի շատ մտցնելու համար և այն ժամանակ մեր գյուղատնտեսութունը առաջ կքայլի այնպիսի տեմպով, վորոնք շատ հեռու կթողնեն իրենց հետևում արևմտա-յեվրոպական յերկրները, Ամերիկան:

Այս դանլիճում հավաքված բանվորների և գյուղացիների համագումարի առաջին քաղաքական նշանակութունը կայանում է նրանում, վոր մենք գյուղատնտեսութեան կոլեկտիվացման բուն թափի հետեւանքով մտացել ենք արդեն նրան, վոր յեթե մինչև այժմ բանվոր

դասակարգի և գյուղացիութեան դաշինքը հիմնված էր քաղաքի և գյուղի ապրանքային կապակցութեան վրա, ապա հիմա մենք արդեն մոտեցել ենք բանվորների և գյուղացիների այդ միութեան բարձրագույն ձևին, այնպիսի դրութեան, վոր մի քայլ ևս առաջ կատարենք սոցիալիստական արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան լրիվ միացման, իսկ դրա հիման վրա անել և հետագա քայլը միութունից դեպի բանվոր դասակարգի և գյուղացիութեան դասակարգային տարբերութեան վերացումը: Մենք հիանալի գիտենք, վոր 1917 թվի հոկտեմբերին մենք առաջին քայլերն եյինք անում մոտենալու համար այս բանին ինչ վոր հիմա կատարվում է, մենք այն ժամանակ ստեղծում եյինք դրա համար միայն առաջին պայմաններն ու նախադրւաները:

Մենք գիտենք, վոր այն ժամանակ մեզ համար շատ հեշտ էր վերացնել խոշոր սեփականութունը, բայց այն ժամանակ հիմարութուն կլինել վերացնել մանր գյուղացիական սեփականութունը: Այդ յերևում է հետևյալից. մեզանից պահանջվեց մեր կուսակցութեան 12 տարվա ճիշտ լենինյան քաղաքականութունը նրա համար, վոր այժմ ընդհուպ մոտենանք սոցիալիստական հեղափոխութեան վերջին, դժվարագույն հարցի լուծմանը—այն է՝ համայնացման միջոցով, վերացնել մանր սեփականութունը գյուղում և վերափոխել գյուղատնտեսութունը սոցիալիստական տնտեսութեան: Մենք այժմ մոտեցել ենք բանվորների և գյուղացիների դաշինքի բարձրագույն շրջանին և արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան միացման հիման վրա մենք պատրաստվում ենք հետևյալ քայլն ել կատարել: Այդ քայլը կլինի քաղաքի և գյուղի ամեն տարբերութեան, բանվոր դասակարգի և չքավոր-միջակ գյուղացիութեան միջև ամեն տեսակի դասակարգային, կենցաղային, կուլտուրական, նյութական տարբերութեան վերացումը: Մենք մոտենում ենք այն դրութեան, յերբ կլինի միայն աշխատավորների մի դասակարգ, քաղաքի և գյուղի մեկ համատարած դասակարգ (ծափահարութեաններ): Յեվ այդ կկատարվի այնքան շուտ, վորքան շուտ մենք սոցիալիստականորեն կվերակառուցենք գյուղատնտեսութունը, վորքան ավելի շուտ կամրապնդվեն կոլխոզները:

Ահա թե ինչո՞ւն և կայանում այս համագումարի, վորը, ինչ թվում է, արտացոլում է այդ գլխավորը, հսկայական քաղաքական նշանակութունը:

ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ — ԱՌԱՋ ԴԵՊԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱ- ՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ

Յես կուզենայի վերջացնել իմ յերույթը մի քանի ցուցմունքներով այն մասին, վոր մենք չենք կարող իրեալիստ լինել և կարծել թե՛ քանի վոր այժմ համատարած կոլեկտիվացումն է, ապա ուրեմն բոլոր դժվարութիւնները վերացված են: Վոչ, մենք այդպիսի իրեալիստներ չինք չենք պատրաստվում: Մեր կուսակցութիւնը պատրաստվում է հաղթահարել այն հսկայական դժվարութիւնները, վորոնք կանգնած են կոլեկտիվացման ուղիի վրա: Մենք եւս լավ գիտենք, վոր կոլեկտիվացման աշխատանքներում խոստացուցին պատմական հաջողութիւններին հետ միաժամանակ գործնականում կատարվում են յեւ ղեռ պե՛տ է կատարվեն եւս հիմարութիւններ, բավական եւս քերութիւններ կլինեն: Այդ բոլորն անխուսափելի յի: Կոլեկտիվացման այնպիսի գիտուններ, վորոնք առանց սխալի կարողանան լուծել բոլոր հարցերը, այնպիսի գիտուններ, վորոնք առաջուց մեզ համար կոլեկտիվացման այնպիսի մի փայլուն ծրագիր մշակելին, վոր 100 տոկոսով համապատասխաներ բոլոր պահանջներին՝ այդ չկա: Մենք պատմութիւն մեջ գյուղատնտեսութիւնը, մանր անհատական տնտեսութիւնը խոշոր տնտեսութիւն վերափոխելու փորձառութիւնը չունենք, իսկ այն փորձառութիւնը, վորը մենք ունեցինք մինչև այժմ հանձինս մանր կոլտոգների, դա բավական չէ, վորովհետև մենք այժմ կազմակերպում ենք բոլորովին ուրիշ տիպի, ուրիշ մասշտաբի կոլտոգներ, այդ պատճառով սխալները անխուսափելի յեն, այդ հսկայական աշխատանքում անխուսափելի յեն դժվարութիւնները:

Մենք գիտենք, վոր դժվարութիւնների մի մասը առաջանալու յն նրանից, վոր միջակը չի կարող անցնել անհատական տնտեսութիւնից կոլեկտիվ տնտեսութիւնի առանց վորոշ տատանումների, առանց ախ ու վախի, առանց հետ նայելու: Նույնիսկ այն ժամանակ, յերբ նա կոլտոգում կլինի, նրա մեջ վորոշ շրջանում կովիւր յեն յերկու սկզբունք — սեփականատիրոջ և նոր կոլեկտիվ մարդու սկզբունքներ, դա անխուսափելի յի: Ձի կարող նա հենց վոր կոլտոգում գրվեց կոլտոգնիկ գառնալ, վորովհետև նա դարեր շարունակ ապրել է տնտեսութիւն մի ձևով, իր մանր, թեպետ և նրան ուժասպառ անող, գիշատիչ տնտեսութիւն տերն է յնդել, իսկ այժմ նորին, բոլորովին հակառակ տիպի համայնական

տնտեսութիւն պետք է ընտելանալ և նա առանց տատանումների, առանց հինը հիշելու, առանց դրան նա այդպիսի խոշոր թոխը անել չի կարող: Այստեղից և այն դժվարութիւնները, վորոնք կարող են լինել կոլտոգշարժման ընթացքում մարդկանց վերափոխելու գործում: Այդ տեսակետից առանձին մեծ դեր է ընկնում կատարելու գյուղ գնացող բանվորների վրա, վորոնք այդ ասպարիզում կարող են հսկայական աշխատանք կատարել, գյուղատնտեսութիւն մեջ տեղափոխելով այն ձևերը, այն ունակութիւնները, այն մեթոդները, վորոնցով բանվորները աշխատում են սոցիալիստական գործարաններում: Կլինեն և շատ ուրիշ դժվարութիւններ, վորոնց մենք կհանդիպենք մեր ճանապարհին:

Ոգնելու համար գյուղ գնացող աշխատողները մեզանից ամենասեփազիր ցուցմունքներն են ստանում, վորովհետև մենք չենք կարող վերջնական ծրագիր տալ նրանց, թե ինչպես շինել կոլեկտիվ տնտեսութիւնը: Այդ փորձը նրանք կստանան տեղում աշխատանքի ընթացքում, գյուղացիութիւն գործնական ոգնութիւնն պրոցեսում:

Դժվարութիւնները շատ են, վորովհետև մենք գտնվում ենք այդ մեծ աշխատանքի սկզբում: Ձեռկանորեն կոլտոգ ստեղծելը այժմ աշխատանքի ամենահեշտ մասն է, իսկ կոլտոգի աշխատանքը կազմակերպելը, իսկապես կարգավորել այնտեղ ամեն ինչ, բոլորը ձիշտ տեղեկութիւններ, վորպեսզի կոլտոգը իսկական խոշոր սոցիալիստական ձեռնարկ դարձնել, դա — ամենադժվարն է: Այդ մեծ աշխատանքի համար, վորի սկզբում մենք գտնվում ենք, մենք պարտավոր ենք մեզ պատրաստել:

Սակայն, ինչքան էլ վոր խոշոր լինեն դժվարութիւններն ու արգելքները, վորոնք կկանգնեն վորպես կոլեկտիվացման հարցերում գործնական արգելքներ, ինչպիսի սխալներ էլ կոլտոգշինարարութիւնն ասպարիզում մենք չկատարենք, այնուամենայնիվ այդ բոլորը ավելի քան ծածկվում է այն մեծ վոզկորութիւնով, վոր տուաջ են բերել համատարած կոլեկտիվացման հարցերը և այն անվեհեր հավատով, վորով բանվորները և այժմ արդեն գյուղացիութիւն հիմնական մասսան գնում են դեպի կոլեկտիվացումը: Այդ վոզկորութիւնը, այդ մեծագույն հավատը մեզ իրավունք են տալիս կարծելու, վոր սոցիալիզմի շինարարութիւնն ճակատում հաղթանակը մենք կտանենք:



<< Ազգային գրադարան



NL0196567

24720

ԳԻՆՆ Ե 2 ԿՈՊ.